ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք, հասցե Կոտայքի մարզ.գյուղ Քաղսի 6-րդ փողոց, 1-ին շենք, հեռախոս 077-077-250, էլ. Փոստ qaxsi.kotayk@mail.ru

24.11. 2015թ.

N 031-209

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Կ.ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գուլոյան

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի, Ձեզ է ուղարկվում Կոտայքի մարզի Քաղսի համայնքի ավագանու 2015թ. նոյեմբերի 18-ի թիվ 20 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր 3 թերթ:

Համայնքի ղեկավար  Ս.Ալեքսանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Քաղսի համայնք, հասցե՝ Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի
6-րդ փողոց, 1-ին շենք, հեռախոս՝ 077-077-250, էլ. Փոստ՝ qaxsi.kotayk@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«18» նոյեմբերի** 2015թվականի **N52 -Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 20 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով,

համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Քաղսի համայնքի ավագանու 2015թվականի նոյեմբերի 18-ի թիվ 20 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամին դիմելու մասին.
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 22-ի N70-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

*Կողմ* 5 *Դեմ 0* *Ձեռնպահ 0*

*Ավագանու անդամներ՝*

1. Գրիգորյան Մանվել
2. Դավթյան Գևորգ
3. Խուրշուդյան Գևորգ
4. Պետրոսյան Օնիկ
5. [illegible]

Համայնքի ղեկավար՝ Ս.Ալեքսանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Քաղսի համայնք, հասցե՝ Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի
6-րդ փողոց, 1-ին շենք, հեռախոս՝ 077-077-250, էլ. Փոստ՝qaxsi.kotayk@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

**«18» նոյեմբերի 2015թվականի N53**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասով,

համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ու Մ Է՝

1. Դիմել Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամին (ՀՏԶՀ)՝ համայնքի համար հետևյալ առաջնահերթ խնդրով.
   1) Կառուցել Կոտայքի մարզի Քաղսի համայնքում Առողջության Առաջնային Պահպանման Կենտրոն (ԱԱՊԿ) :
2. Հայտի հաստատման դեպքում կատարել 10 % Ներդրում՝ Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման (ՍՆՏԶ) ծրագրի պահանջներին համապատասխան:
3. Ծրագրի իրականացման դեպքում վերականգնված ենթակառուցվածքի շահագործման և պահպանման անհրաժեշտ ծախսերը ներառել համայնքի բյուջեում:
4. Հանձնարարել գյուղապետարանին պատրաստել և ՀՏԶՀ -ին ներկայացնել համապատասխան հայտ՝ ծրագրին մասնակցելու վերաբերյալ:
5. Վերականգնված ենթակառուցվածքը չօտարել, չսեփականաշնորհել կամ չօգտագործել այլ նպատակներով ծրագրի ավարտից հետո 15 տարվա ընթացքում:

*Կողմ* 5 *Դեմ 0* *Ձեռնպահ 0*

*Ավագանու անդամներ՝*

1. Գրիգորյան Մանվել
2. Դավթյան Գևորգ
3. Խուրշուդյան Գևորգ
4. Պետրոսյան Օնիկ
5. [illegible] Էդիկ

Համայնքի ղեկավար՝ Ս.Ալեքսանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Քաղսի համայնք, հասցե՝Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի
6-րդ փողոց, 1-ին շենք, հեռախոս՝ 077-077-250, էլ. Փոստ՝qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«18» նոյեմբերի 2015թվականի N54–Ն**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N70-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով,
համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնքի 2015թվականի տարեկան բյուջեի հաստատման մասին» N70-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Բյուջեի եկամտային մասում 1121 տողի «Գույքահարկ փոխադրամիջոցների համար» «1263.200» թվերը փոխարինել «2763.200» թվերով.
2. 01.6.1.60 ծրագրի 4241-«Մասնագիտական ծառայություններ» ենթաանալիտիկ հաշվի «340.000» թվերը փոխարինել «320.000» թվերով.
3. 01.6.1.60 ծրագրի 4823-«Պարտադիր վճարներ» ենթաանալիտիկ հաշվի «10.000» թվերը փոխարինել «4.000» թվերով.
4. 04.2.1.55 ծրագրի 4264-«Տրանսպորտային նյութեր» ենթաանալիտիկ հաշվի «400.000» թվերը փոխարինել «228.000» թվերով.
5. 04.5.1.51 ծրագրի 4251-«Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» ենթաանալիտիկ հաշվի «500.000» թվերը փոխարինել «0» թվով.
6. 03.2.1.55 ծրագրի 4239-«Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» ենթաանալիտիկ հաշվի «200.000» թվերը փոխարինել «0» թվով.
7. 02.2.1.51 ծրագրի 4239-«Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» ենթաանալիտիկ հաշվի «150.000» թվերը փոխարինել «0» թվով.
8. 02.5.1.51 ծրագրի 4239-«Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» ենթաանալիտիկ հաշվի «200.000» թվերը փոխարինել «0» թվով.
9. 08.2.4.51 ծրագրի 4212-«Էներգետիկ ծառայություններ» ենթաանալիտիկ հաշվի «50.000» թվերը փոխարինել «0» թվով.
10. 10.7.1.51 ծրագրի 4729-«Այլ նպաստներ բյուջեից» ենթաանալիտիկ հաշվի «3500.000» թվերը փոխարինել «4798.000» թվերով.
11. 0.1.1.51 ծրագրի 4111-«Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» ենթաանալիտիկ հաշվի «18000.000» թվերը փոխարինել «19500.000» թվերով:

*Կողմ* 5 *Դեմ 0* *Ձեռնպահ 0*

*Ավագանու անդամներ՝*

1. Գրիգորյան Մանվել
2. Դավթյան Գևորգ
3. Խաչատրյան Գևորգ
4. Պետրոսյան Օնիկ
5. Ենոքյան Էդիկ

Համայնքի ղեկավար՝ Ս.Ալեքսանյան